ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/38

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.03.2018թ. թիվ 03/26-3/5751-18 գրությամբ Ա/Ձ Գալուստ Աղումյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.03.2018թ. թիվ ԴՎԱ/1017 գրության հիման վրա, 29.03.2018թ. թիվ 03/26-3/5751-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Գալուստ Աղումյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Գալուստ Աղումյանին ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Գալուստ Աղումյանի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Գալուստ Աղումյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/38 ընթացակարգի շրջանակներում 05.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել էր ձեռք բերել համապատասխան պարամետրերով էլեկտրոնային գրատախտակ, որը սակայն այլևս չի արտադրվում, ուստի Մասնակիցը որոշել է առաջարկել ավելի նոր մոդել: Միևնույն ժամանակ Մասնակիցը սխալ է հաշվարկել գնային առաջարկը, ինչի հետևանքով այն դարձել է անիրական նշված ապրանքի համար: Ուստի Ա/Ձ Գալուստ Աղումյանը հայտերը բացվելուց հետո գրություն է ուղղել գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով չքննարկել մասնակցի հայտը ընթացակարգի 20-րդ չափաբաժնի մասով:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.03.2018թ. թիվ ԴՎԱ/1017 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտ ներկայացրած մասնակիցներից Ա/Ձ Գալուստ Աղումյանը գրությամբ դիմել է գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով չքննարկել Ա/Ձ Գալուստ Աղումյանի կողմից ներկայացված հայտը (գնային առաջարկը) 20-րդ չափաբաժնի մասով, քանի որ իր կողմից տեղի է ունեցել վրիպում և ներկայացվել է ոչ իրական գնային առաջարկ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/38 ընթացակարգի շրջանակներում 05.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Գալուստ Աղումյանը:
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 15.03.2018թ. գրությամբ Ա/Ձ Գալուստ Աղումյանը հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 9 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Գալուստ Աղումյանի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2018թ. թիվ 03/26-3/5751-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.03.2018թ. թիվ ԴՎԱ/1017 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն (այսուհետ՝ Օրենք)՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-

րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով սահմանված ժամկետով որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գալուստ Աղումյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 15.03.2018թ. գրությամբ Ա/Ձ Գալուստ Աղումյանը հայտնել է, որ Ընթացակարգի թիվ 20 չափաբաժնի մասով իր կողմից տեղի է ունեցել վրիպում և ներկայացվել է ոչ իրական գնային առաջարկ:

Մասնակիցը վերոհիշյալ գրությամբ խնդրել է Ընթացակարգի 20-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Գալուստ Աղումյանի ներկայացրած հայտը չքննարկել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 9 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Գալուստ Աղումյանի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Գալուստ Աղումյանը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ Ընթացակարգի հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.03.2018թ. թիվ 03/26-3/5751-18 գրությամբ Ա/Ձ Գալուստ Աղումյանին (ՀՎՀՀ՝ 54642231) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Գալուստ Աղումյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ